ԹԻՒ 439 Զ. ՏԱՐԻ ՇՐՋԱՆ Թ. 1874 11 ԴԵԿՏԵՄԲԵՐ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Մամլոյ իւրաքանչիւր շրջանը 32 օրինակ է։
Ստորագրութեան տեղն է Պօլիս, Զինճիրլի խան վերի յարկ թիւ 18։
Դուրս երթալիք թերթից փոստայի ծախքը առնողին վրայ է։

Շրջանին գինը դահեկան կանխիկ 60
Կիսաշրջանը » » 30
Մէկ թիւը փարայ 50
Ծանուցման տողն է դահեկան 2

ՄԱՄՈՒԼԷՆ ԱՌ ԹԱՇՃԻ ՊԱՇԻՆ

Անցեալ շաբթուան զրկած նամակդ հրատարակեցի, և այս անդամ պատասխանդ կուտամ ներկայ թերթովս։

Քու ցաւերդ՝ որոնք առաւել յուզողը Մամուլ եղաւ, քիչ մը մեղմացնողն ու զքեզ մխիթարողն ալ դարձեալ Մամուլ ըլլալ կուզէ. ուստի ուրախութեամբ կը ծանուցանէ քեզ, ով Թաշճի պաշի, թէ զրկած նամակդ իր ազդու տպաւորութիւնն ունեցաւ, և բաղձանացդ համաձայն քու ժառանգորդներդ կրցան իրենց մէջ միաբանիլ և ժառանգական խնդիրնին կարգադրել, շնորհիւ այն քանի մը նշանաւոր բարեկամացդ։

Մամուլ ոչ միայն կուրախանայ այս եղածին վրայ. այլ և քիչ մ՛ ալ պարծենալու իրաւունքը կըստանայ. աղէկ բանը կը սիրուի, աղէկ բանը գովեստներ կընդունի. և անցեալ շաբթուան զրկած նամակդ և անով յայտնած բաղձանքներդ ալ աղէկ բաներ էին, հետեւաբար բոլորէն ալ սիրուեցան և գովուեցան։

Նոյն իսկ այն յիշած ընտիր բարեկամներդ ալ յորդորուեցան առաջարկութիւնդ նկատողութեան առնուլ, և հաշտարար եղան քու ժառանգորդ եղբարցդ և կնոջդ մէջ. և ժառանգութեանդ խնդիրը երկու կողման հաճութեամբը աւարտելէն ետքը, 250 լիրայի քօնսօլիտ քու բաղձանացդ համաձայն նուիրեցին Երմոնիկ աղջկանդ անուամբը կառուցած վարժարանիդ, և 200 լիրայի քօնսօլիտ ալ ազգային Հիւանդանոցի խղճալեաց։

Այժմ Երմոնեան վարժարանի ուսանողաց աղքատիկ դասուն հետ՝ Հիւանդանոցի մէջ պատսպարեալ 500 ի մօտ խղճալեաց օրհներգութիւնները ալ միացան։ Այժմ անոնք որ քու մահլիւլ եղած ստացուածոցդ վրայ անմխիթար կը ցաւէին՝ դէթ փոքրիկ մխիթարութիւն մը զգացին այս տնօրէնութեանդ վրայ, և ցաւերնին մեղմանալ սկսաւ։

Մամուլ ալ ասոնց կընկերանայ, և գովեստով կը հռչակէ այս նոր տնօրէնութիւնդ, որ քու յիշատակիդ արատը սրբեց. և աւելի պիտի գովէ և հռչակէ յիշատակդ, թէ որ քեզի հետ այժմ դասակից գտնուողներուն

մէջ դտնես այն հոգիները, որ այս աշխարհիս վրայ ժամանակ չունեցան իրենց անբաւ հարստութենէն աղդին աղքատաց և մանկանց բաժին հանել, դէթ յորդորես որ ատկէ իրենց կամքը իրենց ժառանգորդաց յայտնեն դրով. Մամուլ պատրաստ է այդ նամակները սիրով հրատարակել և առանցմով աղդին օգտակար ծառայութիւն ընել։

ԴԱՐՁԵԱԼ ՄԵՐ ԴԵՏԸ

Այս երկուշաբթի օր Նորէն Ոսթիկանութեան Դուռը ձէզա Մէհրէմէսի առեանը ներկայացանք դատուելու, սակայն այս անդամ ալ մեր ոտոխներէն մէկն ալ հոն չգըտանք, ուր մինչև ժամը 10 սպասեցինք վերջը դատարանը մտնելով իմաց տուինք թէ, այս մարդիկը այսօր ալ փախուստ տուին դատէն, յաւելցնելով նաեւս թէ, մեղի դէմ նոմոանին ըընտրուելու եկող այդ մարդիկը մինչև ե՞րբ արդեօք փախուստ պիտի տան մեր առջեւէն, և մեր ալ այսպէս դատարաններուն դռները դեգերելուն պատճառ պիտի ըլլան։

Նախագահը ուշադրութեան առնելով մեր այս իրաւացի դիտողութիւնը, քաղաքավար կերպով մը, քաղցրութեամբ ըսաւ թէ,

— Անհոգ եղիք, էֆէնտիմ, դուք դալ երկուշաբթի օր անդամ մ՚ալ եկէք ներկայ դտնուեցէ՛ք տէ, մենք իրենց մէյ մէկ խիստ դ-ը-ւ-ե-ր կը դրենք, եթէ ասոր վրայ ալ չը ներկայանան, այն ատեն պէտք եղած միջոցը ըստ այնմ ձեռք կա՛ռնենք։

Շա՛տ բան, շատ բա՛ն, Նոմոս տալուէի եկող մարդ մը ասանկ շուտ մը ճոյդ ըլլա՞յ... հէ՞...։

Ա՛խ Վարդով աղբար, ուր որ ես նէ՝ ասկանկդ խօսք. քեզի համար չէ՛ մեր ըսած խօսքը, եկող պատրիարքին խօսքը կընենք կոր։ Ո՞ւր ասանկ, ինչո՞ւ համար կէս ճանբան մնացիր. ճակատդ բաց է նէ, եթէ վատահ ես իրաւունքը քու կողմդ ըլլալուն նէ, հրամայէ՛ ատեան, ամօթ չէ՞ քեզի պէս խոշոր ու ճարպիկ մարդու մը՝ դատաստանէն փախուստ տալը։

Եթէ մինչև ցարդ ամօդամի մը չես կըրցած դտնել նէ, հոգ չէ՝, ա՛ռ ալ մեծ արդելք մը չէ՛ քեզի համար. դուն արդէն ասդին անդին մեծ մեծ ջարդելու ելեր ես ելեր ըսելով թէ — ես դուռները շատ կողմնակիցներ ունիմ, մէկ անդամ դատի մտնելուս՝ Մամուլը Ռէպէ-Ռ-Ի-Ա պիտի բերեմ —։

Շիտակը սուտ չէ՝ ատ խօսքը, երկուքնուս մէկը՝ առանցին անդամ դատի ներկայանալու՝ Ռէպէ-Ռ-Ի-Ա եկա՛ւ ամա, որերնի՞ս եկանք չեմ գիտեր։

Նայէ՛, Վարդով աղբար, քեզի բարեկամաբար խօսք մը ըսեմ, պատուոյ նախանձախընդրութիւն ըսած բանդ՝ դատաստանէն փախուստ տալով չըլլար, պատիւ ըսածդ՝ մարդ տուած խօսքը բռնելով կըլլայ. սակայն դուն այս մասին ալ այնքան խեղճ ես որ, երեք անդամ դատի ներկայանալու համար խօսք տուած օրերուդ մէջ երեք անդամ ալ բացակայ դտնուելովդ, չե՞ս մոռցեր թէ քու պատուաւորութեանդ վրայ ի՞նչ նուաստ դաղափար մը տուած կըլլաս նոյն իսկ քու դատաւորներուդ, որոնց որ յանձնած ես քու պատուոյ պաշտպանութեանդ դատը։

Իսկ եթէ չունի՞ս համարձակութիւն Մամլոյ հետ դէմ առ դէմ դատի մտնելու, դանէ՛ խոստովանէ՛ խեղճութիւնդ, և ուրիշ անդամ նայէ՛ որ խոհեմութիւնը ձեռքէ չըթողուս և Մամուլի հետ չափուելու փորձանքին մէջ չիյնաս, ինչու որ Մամուլի հետ ոչինչ ելլելը՝ դերասաններուդ հետ ոչինչ ելլելուդ չընմանիր։

Այսօր ալ այսչափ։

ՆՈՐ ԲԱՑՈՒԵԼԻՔ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԸ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԸ

Վեց ամիսի կը մօտենայ որ լրագրաց մէջ կը տեսնուի թէ նոր բացուելիք վարժարան մը պիտի ըլլայ, և ատոր համար պատուաւոր և բանիբուն կառավարիչ մը կուզուի:

Շատեր մեռագ ըրեր էին դիտնալու թէ արդեօք այդ վարժարանին տնօրէնը, հայկաբանը, դաղղիաբանը, տաճկաբանը, թուաբանը, պատմաբանը, բնաբանը, տարրաբանը, աշխարհաբանը ևն ամէնքն պատրաստ են տէ, բանը միայն կառավարիչ մը դտնելո՞ւն մնացեր է. թէ՝ անանկ կառավարիչ մը կուզուի որ թէ տնօրէն ըլլայ, թէ հայկաբան, թէ դաղղիաբան, թէ տաճկաբան ևն ևն. և ամսականն ալ 300 դրչ՛. և այս պատճառաւ իրենց ուզած կառավարիչը չեն կըրնար կոր դտնել:

Ասիկա հանելուկ մը եղած է. և տակաւին լուծողը չդտնուեցաւ: Մեր դիտցածն այն է որ մինչև ցարդ 50 ի կը մօտենայ կառավարչութեան պաշտօնի համար պատրաստ ըլլող և գրուողները:

Հիմա այս գրուողները մտմտուքի մը մէջ են թէ, եթէ ուրիշ տեղէ ալ ուզող գըտնուինէ, ի՞նչ ընեն. արդեօք սպասե՞ն այս նոր բացուելիք վարժարանին բացմանը, թէ թողուն անիկա և երթան ուրիշ դտած գործերնուն:

Նոր բացուելիք վարժարանին բացողին ալ բաղդէն այս միջոցին այնչափ պօշ պտըտողներ կան, որ ամէնքն ալ կառավարչութիւն ընելու պատրաստութիւն ունին: Կառավարչութիւն ըսածդ ի՞նչ է որ, տէյնէկ մը ձեռքըդ կառնես, կիյնաս տղոցը մէջ, ծօ սուս եղիր կը պօռաս. չեղաւնէ՝ մէյմը երկուք կը տփես: խեղճ տղան կը ճըվճըվացնես, կըլլայ լռութիւն, օրն ալ իրիկուն, տղաքը կը ճամբես, վարժարանը կը ձգես, և սրճարան կը մտնես, թավլու թուղթ ևն կը խաղաս:

Նոր բացուելիք վարժարանին կառավարիչ գրուողներուն կը ծանուցանենք որ այդ վարժարանը բանալ ուզողը մինչև ամիս մը տակաւին պիտի չկրնայ բանալ. մինչև որ կաղանդն անցնի. վասն զի միտքը դրեր է որ 5–6 կառավարիչ մը առնէ իր նոր բանալիք վարժարանին համար, և մտմտալով որ առնելիք տղոց տալիք կաղանդչէքները հիչ մէկուն չպիտի օգտէ. այժմ վարժարան բանալը զանց ըրած է. Ծնունդէն ետքն ալ բանալու միտք ունենայ նէ, մենք իրենց կիմացնենք:

Այս առթիւ Մամուլ ցրուիչի մը պէտք ունի և կիմացնէ որ ով որ կառավարիչ ըլլալ կուզէր տէ, իր կառավարութիւնը կաղանդէն ետքի պիտի մնայ. եթէ կը հաճի ցրուիչութիւն ընելու՝ թող աճապարէ մեր սենեակը դալու. միայն թէ ցրուիչներուն կաղանդչէքին վրայ ՆՈՐ տնօրէնութիւն մը պիտի ընենք, դիտնան ու անանկ դան, որ յետոյ չի զղջան. հասկցողին շատ բարև:

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

Լոնտրայէն նոր մայրաքաղաքս եկող Լորտի մը տիկինը, երէկ առաւօտ կամրջէն Պօլսոյ կողմը անցնելու ատեն շրջագայութեան համար, յանկարծ Զըպլագ Մստաֆան իւր հանրածանօթ մերկանդամ կերպարանքովը տիկնոջ դէմը կելլէ: Կինն այս դիւահարը տեսնելուն պէս՝ սոսկումով մէկ կողմ կը քաշուի և իր թարգմանին ձեռքէն բռնելով կը հարցնէ իրեն:

— Ո՞վ է այս մարդը.

— Խելագար մըն է, մատամ,

— Էյ ասքաղաքը յիմարանոց չըկա՞յ որ ասոնք փողոցները թողած են:

— Իրա՛ւ մէկ հատ մը կա՛յ ամա, հոս գըտնուող խենդերուն ամենքն ալ մէջը չըկըրնալ առնելուն համար, պաղիսին դուրս ձըգած են:

— Բայց ասոնք մարդու գլաս չէ՞ն տար։

— Ո՛չ, մատամ, ալ աս խենդերը անանկ ընտանի եղած են որ մարդու մըն ալ գլաս չեն հասցներ, մինչև անդամ հրապարակին վրայ ասոնց մէջ ամեն տեսակ փափուկ պաշտօններ վարողներ կան, ասոնց մէջ բժշկութիւն ընող ալ կայ, ավօքատութիւն ընող ալ կայ, խմբագրութեան պարապողներ ալ կան, պանքերութիւն ընող ալ կայ վերջապէս ամեն մէկը մէյմէկ պատուսաւոր դործով կզբաղին, թէպէտ խելագար են։

— Զբսե՞ս անանկ է նէ այս երկերը մեր կարծածէն չա՛տ աւելի յառաջ դացեր է։

* * *

Մարդուն մէկն անցեալները գիշեր մը իւր մէկ բարեկամին տունը հիւր մնալով, կէս գիշերն անցած, երբ տանը մէջ զանազանութիւն ամենքն ալ խոր քնոյ մէջ էին, հիւրը կամաց մը անկողինէն կելլէ սենեկին մէջ պառկող իւր ընկերներուն գրպանները խառնելով պարպած միջոցին, պառկողներէն մէկը ելած ելաբերեբերէն յանկարծ աչքերը բանալով

— Նէ՞ օ, հօճա Ռ... պու վագրթ գալգմըշ նէ՞ եաբբյօրսըն։

— Պրա՛գ ատամ, բիրէ թօփլայօրում։

— Էյ հիչ բիրէ տեսիղին պէօյլէ սէս չըգարըր մը։

— Պէ՞ն նէ՛ եաբայրմ, դա՛բաշ, պուրանդն բիրէլէրի ճայնաւոր ըմբշ։

Տան մը մէջ չորս հոգի էլրոհը սկամպիլ մը խաղացած ատեններն տանը դուռը յանկարծ կը չալուի։ Մէջերնուն մէկը պատուհանին առջևը վազելով վար կը նայի կը տեսնէ որ տանը կնքահայրներէն պաքանը, քասապ, էրմէրճի դրանը առաջը խմբաբ են կապիկը ձայն չը հանելով կամացուկ մը գլուխը ներս կը քաշէ, ու ձեռքի թղթերը սեղանին վրայ նետելով,

— Ալթմըշ պիր, կը պօռայ։

Ընկերը համրելով թուղթերը, կը տեսնէ որ յիսուն և ութ է։

— Էյի սայ, էյի, կըսէ, պիր տահա սայ էլլի սէքիզ օրմասըն։

— Էօյլէ, իւչտէ գաբուտա պէրլէյօր, իչտէ ալթմըշ պիր։

* * *

Պոնժուր, միւսիւ կոզմի։

— Օ՛, պոնժուր, միւսիւ Անթուան։

— Նա՞սըլսըն պագալրմ, պարէ պիր իշ եաբըշապիլսի՞ն մի։

— Խա՛յրը տահա, ֆագաթ ... պիր խայրը, իշ վա՛ր տըր ամա, պիր աղ բումճա պիլմէլի խմիշ։

— Է՛հ, մերաք իսէրսէն էօյրէնիրսին, պիր չէյ սէյիր։

— Ատամ, պրա՛գ ճանընը սէվիրսէն, իւչ պէշ այ տըր չալըշըպ չապալայօրում, պիր թիւրլիւ ույատուրամատրմ կիթտի։

— Ճանրմ, օֆուրթմա սէնատէ իշի, բումճա տա էօյրէնմէք պիր չէ՞յ մի գայրը, պիզիմ էվտէ պէօյիւքտէն քիւչիւյէտէք պիսիրլէր, հիչ զօռ պիր լիսան տէյի՛լ քի։

— Էյ նէ՞ եաբայրմ, էօյրէնէմէյօրում իշտէ։

— Տու՛ր պագալրմ, նէ՞ եաբտըն քի։

— Նէ՞ եաբաճայրմ քի, հօճա թուրթտում օրմատը, պէսլէմէ ալտրդ օրմատը։

— Ճանը՛մ, սէնին էկէր բումճա էօյրէնմէյէ հավէսին վար ըսա, էօյլէ շէյլէր պօշ չէյ տիր։

— Էյ նէ՞ եաբմալը քի։

— Թիւրքճէ պիլմէ՞զսին։

— Էվվէթ պիլիրիմ։

— Է՛հ, թիւրքճէ պիլուիքտէն սոնրա, հէր պիր լուղեթին էօնիւնէ վէ արդանընա պիրէր ֆուլէ նէ եաբըշտըրտըղը կիպի, իշտէ բումճա օլտու կիթտի։

— Սահի՞հմի, նասըլ չէյ օլուր օ...

— Իշտէ, պարտանա ոանա պէր էօրիւ-նէք վերէյիմ, մէսելա, թօ Զարիֆի, թօ Խրիսթաքի, թօ լիրալարի բէք չօդ լինէ, թօ աճապա պիզէ տէ պէր բայ չէդարի՞ղ լինէ։

— Ամմա եաբարն հա, կէօրիւնիւր քի սէն Բումճայը եալընդը Խրիսթաքինին Զարիֆինին լիրալարընա դավուշմադ իչին էօյրէնիշ օլ-մալըսըն։

— Ատամ, սէնտէ խթէտիյին չէյէ դա-վուշմադ իչին էօյրէն, պու եօլ ըլա օլատուդ-ման սօնրա՝ պունտան դօլայ չէյ օլ՞ուր մու, տէր ապտալ իբի հաֆիթանընը կիչինտէ ըռամ ճայը հաթիմ պիթիմ իտէրսին կիտէր։

— Հէր նէ հալ իսէ, պու եօլ իշիմէ կէլիր, պէր տէֆա շունո՛ սընայալըմ։

ՄԱՊՈՒՆ ՀՕՐՄԱՐԻՆ

Սամաթիայի ասկերիչ Ռ... անուն անձ մը ասկէց առաջ Նոյն Թաղին մէջ բնակող աղջկան մը հետ դաղտնի յարաբերութեանց մէջ մտնելով և զինքը խաբելով թէ ելին հետ պիտի ամուսնանայ, աղջկան պատիւը բրնաբարել կը յանդգնի։

Յետոյ սոյն աղջիկը յուսահատ և անպատիւ թողլով դարձեալ նոյն Թաղէն 500 ոսկի դրամօգնայով ուրիշ աղջկան մը հետ կը նը-շանուի։

Աղջկան կողմէն այս լուրը իմացուելով դատ կը բանան յիշեալ անձին դէմ։

Այժմ կը լսեմք թէ յիշեալ Ռ... անուն անձը իւր գործած եղեռնագործութիւնը արդարացնելու համար, իւր կողմէն ավօգաթ մը կարդեր է. բայց չենք գիտեր թէ ա-դեօք Պատրիարքարանը այս տեսակ փտուկ խնդիրներու մէջ փաստաբան դրուելու ըս-կզբունքը պիտի ընդունի՞. — կարծեմք թէ ո՛չ. վասն զի ասկէց առաջ իր հրատարակած մէկ պաշտօնական ծանուցմանը մէջ կարդա-ցինք թէ ամուսնական դատերու համար փաստաբան չը պիտի ընդունուի։

Այս մասին դեռ լուսաբանութիւն։

Հեռաւոր առանց-ի ոտանաւորը փնտրի հե-ղինակին տողերէն կը քաղեմք յաջորդ թուով։

ԶՕՆ

ԱՌ ՄԵԾՆ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

ՏԻԵԶԵՐԱՀՌՉԱԿ ՀԱՅԱԶՆ ՆԿԱՐԻՉՆ

Եւ իվարդոր է՛ր, ըղբեդ
Կոչէ վեհ Պեան Թուրքիոյ։
Մէ ըզմիովք՝ էր լուտ,
Մըրցին դործոց ձեռին Քոյ։

Ճշմարտ Երկնից՝ է՛, ո՞ Տէր,
Վրձէն ձեռինդ կորովի,
Ընդ որ սրխրին պերճ որեր,
Բնութիւն, և տուն Մինեռվի։

Եւ Պիսիդոն՝ ոգի ծովու,
Ընդ մոյն, ընդ յոյզ ծովուդ ոստնու,
«Ո՛վ է՝, որ զսոյն ըղնոր ծով
«Բերէ ի դոյ, տեսից, ո՛վ»։

Նոյնպէս ընդ Քոյդ շո՛ղս և նշողս,
Պընուն Փերէ և Փերսա,
Գոռ նո՛ր Զեւքսիս, որ կեղծն յողկոյզ
Զըդէր հեռուստ թըռչնոց ըղբոյզ։

Յոտին Քում, տուն Թորգոմի՝
Բերկրի ի սիրա և հոգի
Ցերբ բընութիւն Քեզ խօսի,
Շուք և շընորհ ըզմիօք լիցի։

Երկին ընդ Քեզ եղիցի միշտ,
Երկի՛ն ընդ սեղ Քո վրձնիդ,
Որով հերիք ըսփոփ լիցի,
Հերի՛ք, մերս հէ՛ք՝ հէ՛ք դերոհի։

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Մեծ. Էքսէրճեան Տէլէմաք էֆէնտիի նշանաւոր երկասիրութիւններէն երեք հատ իւղաներկ պատկերներ այս անգամ յանձնաժողովոյ մը ձեռամբ վիճահահանութեան դրուած են:

Վիճակահանութիւնը 500 տոմսակէ կը բաղկանայ, որոյ 3 թիւերը պիտի շահին միայն երեք պատկերները, որոց առաջինը՝ լսողութեան զգայարանը անձնաւորող կիսամերկ կոյս մը կը ներկայացնէ, երկրորդը՝ Բերայի աղեկտուր հրդեհին կենդանի մէկ նկարագիրն է, երրորդն ալ Ովկիանոսի մէջ սոսկալի փոթորկի մը բռնուած եռայարկ նակու մը ալէկոծութիւնը կը ներկայացնէ. սոյն պատկերներուն երեքն ալ ընտիր ոսկեզօծ շրջանակներ ունենալով, որոց իւրաքանչիւրին արժէքը՝ իրենց վիճակահանութեան դրուած գինէն շատ բարձր են ըստ վկայութեան և գնահատութեան արուեստագիտաց:

Ներկայ վիճակահանութիւնը յառաջիկայ 1875 փետրուար ամսոյ վերջին կիրակի օրը պիտի կատարուի Ղալաթիոյ Լուսաւորչեան վարժարանը. իւրաքանչիւր տոմսին գինն է մէկ արծաթ մէճիտ:

Տոմսակները կը ծախուին՝

Քրէտի-Ժէնէրալ պանքան Պետրոս աղա Տ. Օհանեանի քով, և Պօլիս մեր գրասենեակը:

ԿԻՐԱԿԻՆԵՐ

Մէկ քանի շաբաթէ ի վեր, Պօլսոյ ընկերութիւններէն ոմանք այլ և այլ պատճառներով կիրակի բռնելու ստիպուած են, տեսնենք թէ ասս կիրակիներուն վերջը երբ պիտի գայ:

Գատըգիւղ բանող շոգենաւները լօտօսներուն պատճառաւ:

Սամաթիա բանող թրամվայը Մաքրիգիւղէն վառօդ փոխադրուելուն պատճառաւ:

Լտիրնէ բանող շոգեկառքը՝ ճամբայները աւրուած ըլլալուն պատճառաւ:

Ֆէրիգիւղ բանող օմնիպիւսը, փողոցներուն մէջ դիզուած տիղմերուն պատճառաւ:

Գումգափուի խայլխճիները՝ հարաւային հովերուն պատճառաւ:

Այնպէս կը կարծեմք, որ եթէ այս կիրակիները շատ տևելու ըլլայ, վերոյիշեալ խոշոր ընկերութիւններն ալ, կամաց կամաց պզտիկնալով, Պօլսոյ էլէմօսիներուն ընկեր պիտի ըլլան,

ԿԱՂԱՆԴԻ ՍԸԹՄԱ.

Այս օրերս ալ սա անօրէն սըթման որչափ տարածուեր է, ուր որ ալ երթաս կը տեսնես որ մէկը կայ սըթմայէ բռնուած: Ողորմած հոգի Թըրթըր Յուսէփը հիմայ ողջ ըլլալու էր, մարդը ծեր մեր բաւական գործ կը տեսնար, հապ մը ունէր, որ դէմը ելլողին 5—10 հատ տալով մէկ քանի զրշնին կառնէր... ասս մարդը մեռաւ, սըթման ալ գլուխ վերցուց... բայց հիմակուան մեր գիտցած սըթմաներուն երբէք չը նմանիր... տուն մը կերթաս, կը տեսնես որ կաղանդը մօտեցած ըլլալուն, տղոց հայրը անկիւն մը քաշուած թիր թիր կը դողայ... վաճառականի մը սենեակը կերթաս, կը նայիս որ վաճառականը իր գրասեղանին առջին նստած «արդեօք տարեգլխուն հաշիւներս ի՞նչպէս պիտի ելլեն»ը մտածելով ձմեռ գիշեր փողոցները մնացող մարդոց պէս կը դողայ... լրագրի բաժանորդ եղող անձի մը խանութը կերթաս, կը նայիս որ ցրուիչը հեռուէն տեսնելուն պէս սբազմօզէ բռնուածի պէս կը դողայ... պանդաներու մէջ և կամ ասոր անոր քով դանձապահութեան պաշտօն վարող անձի մը քովը կերթաս, կը տեսնես որ իր տետրակները աչքին զարնելուն պէս,

դողալէն բերանը անդամ չկրնար բանալ . . . գործարանապետի մը քովը կերթաս, կը նայիս որ գործաւորաց ամսական հաշիւները ընելու համար գրիչը ձեռք առնելուն պէս, դողալէն շունչը կը կտրի . . . քիչ շատ հալը վախտը տէղն է տէյի կարծած մարդուդ մէկուն քովը կերթաս, կը նայիս որ եկածը կաղանդ է ըսելով կնկանը ըրած սրփարշները միտքը դալուն պէս, քեզի հետ ըրած խօսքը, որչափ ալ կարեւոր, դողդողալէն բերանը կը մնայ . . . նոր նշանուած երիտասարդի մը աչքի լուսի կերթաս, և երբ խօսքը կարդին բերելով կաղանդի առթիւ նշանածին տալիք պարգեւն ինչ ըլլալը կը հարցնես, կը նայիս որ կեցած տեղը մէկէն ի մէկ դողալ կսկսի . . . կնկանը կամքը տեղը տանելու համար, տունը մէկ քանի ծառաներ, սպասուհիներ, կառապաններ, մշակներ պահելու ստիպեալ անձի մը քով կերթաս, կը տեսնես որ օրացոյցը ձեռքը առնելուն պէս, դողդողալէն չկրնար բանալ . . . շատ ազգականներ և տան բարեկամներ ունեցող մարդու մը տեսութեան կերթաս, կը տեսնես որ կաղանդի և ծընունդի առթիւ տօնախմբութեան եկող գացողներուն համար ընելիք ծախքը քանի որ կը հաշուէ, վրան դող մը դալով բարեւդ անդամ չառնէր . . .

Վերջապէս ո՛ւր և որո՛ւ քով ալ որ երթաս, կը տեսնես որ դողալէն գլուխ առած չունի և երբ տսոր պատճառը կը հարցնես սրթմա է կըսեն:

Սրթմա կապողներուն աչքը լոյս պիտի ըսենք ամմա, մեղի անանկ կուգայ որ ասս սրթմաները այսօր յունուտրի երկուքն է ըսելնուն պէս բան մը չպիտի մնայ, որովհետև ասոնք մեր դիտցած սրթմաներէն չեն, այլ Կաղանդի Սրթմա է:

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Փարիզ 21 դեկտ.

Զախակողմը հարցում մը պիտի ուղղէ, աջակողմը պիտի ընդունի մը ըսեմ պիտի չընդունի մի ըսեմ ինչ ըսեմ. միապետականը հանրապետականը, պօնաբարթեանը, պուրպօնեանը, օրլէանեանը, և փառք յաւիտեանս ամէն:

Պէրլին 22 դեկտ.

Արնիմ կոմսը այսօր դատաստանի պիտի մտնայ մի ըսեմ չը պիտի մտնայ մի ըսեմ, անօթի փորանց պիտի խօսի մի ըսեմ, կուշտ փորանց պիտի խօսի մի ըսեմ, հետը ավօգաթ պիտի ըլլայ մի չըլլայ մի. Արնիմ կոմսը Պիզմարգ իշխանը, Պէրլինը, Բարիզը, Վիէննան, Վէնետիկը Ամերիկան ևլն. ևլն:

Աթէնք 22 դեկտ.

Տէլի Եանին հրաժարեցաւ մի ըսեմ. հրաժարելու միտք ունի մի ըսեմ, հրաժարականը չընդունուի նէ ետ պիտի առնէ ըսեմ ինչ ըսեմ. օրհնեալ ընթերցող, ես ալ աղէկ մը չեմ գիտեր:

Լօնտրա 22 դեկտ.

Հոս ֆօնտօները բարձրացաւ մի ըսեմ վար իջաւ մի ըսեմ, աչքը վեր ելլալէ մի ըսեմ, վար իջնալէ մի ըսեմ, թէ որ ես գիտնամ Աստուած վկայ մարդու բան չեմ ըսեր:

Վիէննտ 23 դեկտ.

Քաղաքիս մէջ բրէնս Պօշ կէզէնը կսպասուի կոր մի ըսեմ չըսպասուիր կոր մի ըսեմ, մեծամեծ պատրաստութիւններ կըլլայ կոր մի ըսեմ չըլլար կոր մի ըսեմ, իրաւ որ հիչ մէկուն հոգը պիլէ չէ:

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՕՐԱՑՈՅՑ

1875 ԹՈՒԻՆ

ՅԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅԷ

Պարունակութիւն (բաց ի բուն Օրացոյցէ) Մանօթութիւն. Պաշտօնական ցուցակ անուանց մկրտելի երախայից տուեալ ի Կրօն. ժողովոյ. Շքանունք եկեղեցականաց, աշխարհականաց և իգական սեռի, Վարչութիւն Հայոց. Ցուցակ առաջնորդաց. Թիւ համայն Հայոց, Հայք ի Ռուսաստան. Հոգևոր իշխանութիւնք Քրիստոնեայ ազգաց ի Կ. Պօլիս. Թիւ մարդկանց աշխարհի և կրօնք. Վիճակագրութիւնք Տաճկաստանի. Կայսերազունք. Նախարարք, Ներկայացուցիչք օտար տէրութեանց. Հայազգի պաշտօնատարք. Բնակիչք գլխաւոր գաւառաց, Մեսք և կրօնք. Համառօտ պատմութիւնք սկզբնաւորութեանց գլխաւոր տէրութեանց. Գահակալք. Գահաժառանքք. Պաշտօնատարք. Բնակիչք. Զօրութիւնք. Նաւատորմք. Գանձք. Պարտք. Վաճառականութիւնք. Երկաթուղիք. Թղթատարութիւնք. Հեռագրութիւնք գլխաւոր տէրութեանց. արժէք դրամոց զանազան ազդաց. Պատկեր և կենսագրութիւն մարէշալ Մաք-Մահոնի. Մ. Թիէրի. Պիզմարք իշխանի, Կիւթէնպէրկի:

Կը ծախուի գրավաճառաց քով դին 3 ղրշ.

Կեդրոնատեղին է Մէրճանը Բաստըրմաճի խանի վերնայարկ թիւ 28 ամեն օր ժամ 5 էն 6:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱԶԴ

Բարենպատակ ձեռնարկութեան մը համար թատերական նպաստ տալ ուզող պատուարժան անձանց կազդարարենք թէ վարչութիւնը պատրաստ է դիւրամատչելի դընով խաղ, խումբ և թատրոն վարձու տալ, այս մասին աւելի տեղեկութիւն առնել ուզողները թող դիմեն Բերայի Արեւելեան թատրոնի մէջ մեր փոխանորդ Պ. Գ. Հ. Ռըշտունւոյն և իրմէ տեղեկանան որոշեալ պայմանները:

ՄԻՀՐԴԱՏ ԱՄԷՐԻԿԵԱՆ

ՏՕՔԹԷՕՐ Վ. ՕՐՄԱՆԱԵՆ ԷՖԷՆՏԻ

Սոյն ճարտար բժիշկը այժմ իւր կեդրոնատեղին փոխադրած է Բանկալթի Ս. Յակոբ հիւանդանոցին մէջ, ուր ամեն օր պատրաստ է ցորեկուան ժամը 6 էն մինչև երեկոյ, իրեն դիմող ամէն կարգի կարօտ ազգայնոց ձրիաբար խնամ տանիլ:

ԻԼԱՆ

Սիրքէճի իսկէլէսինտէ տէմիրճի մաղազալարը իթթիսալինտէ պուլունան մաղազատա սօպա վէ մաթպախ իչին Քարտիֆ վէ Նիուքասթըլ մատէն քէօմիւրիւ սաթըլմագտա օլուպ, թէչրիֆէ բաղպէթ պույուրան զէվաթըն հէր հալտէ խօշնուտ օլաճագլարը իլան օլունուր:

ԹԱՏՐՈՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԲԵՐԱ ՄԵԾ ՓՈՂՈՑ

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ Պ. Մ. ԱՄԷՐԻԿԵԱՆԻ

Ե. Երեկոյթ Բաժանորդաց

12 Դեկտ. 1874 Հինգշաբթի դիշեր ժամ 3

ԲԱՐԻԶՈՒ

ԱՂՔԱՏՆԵՐԸ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ՅԵՕԹՆ ԱՐԱՐՍ

ՊԱԼԷԹ

ՕՐ. ԳՕԼՕՄՊՕԱՆԹՕՆԻԷԹԹԱ ԵՒ ՕՐ. ԴԱՄԻՍ ԱՏԷԼԷ

Արարուածներուն միջոցին Գօմիք և Սէրիէօ պարեր պիտի ներկայացնեն

ՇԱՐԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ
ԳԷՈՐԳ Ց. ԱՅՎԱԶԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
ՐԻԶԱ-ՓԱՇԱ ԽԱՆ ԹԻՒ 3